Հավելված
ՀՀ վարչապետի 2019 թ.
դեկտեմբերի 4 -ի N 864 - Ա
որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

«ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	Հայաստանի Հանրապետության «ՆՈՐՔ» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց» ՓԲԸ-ի համար գնել ռենտգեն սարքավորման թվայնացնող Fire CR Spark 50 բժշկական սարքավորում, այդ թվում՝ 35-43 սմ և 24-30 սմ երկու հատ կասետ
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից
3.	Բարեգործը	Անհատ բարերարներ (իրավաբանական և ֆիզիկական անձինք)
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ, ՀՀ, քաղ. Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 26/1, ՀՎՀՀ՝ 02507456
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետություն, Երևան քաղաք, «ՆՈՐՔ» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց» ՓԲԸ, առողջապահության բնագավառ
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի բյուջեն կազմում է 6,900,000 դրամ:
7.	Բարեգործություն ստացողը	«ՆՈՐՔ» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց» ՓԲԸ
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Նախատեսվում է ծրագիրն իրականացնել լիազոր մարմնի կողմից որոշման ստացումից հետո մինչև 2019 թվականի նոյեմբերի 8-ը:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից ծրագիրը բարեգործական որակվելուց հետո նախատեսվում է «ՄԵԴՊՐՈ» ՍՊԸ-ից գնել ռենտգեն սարքավորման թվայնացնող Fire CR Spark 50 բժշկական սարքավորում, այդ թվում՝ 35-43 սմ և 24-30 սմ երկու հատ կասետ, և անհատույց հանձնել «ՆՈՐՔ» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց» ՓԲԸ-ին: Արժեքը 6,900,000 դրամ է:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	«ՄԵԴՊՐՈ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պայմանագրի N 1 հավելվածի սարքավորման ցանկի համաձայն՝ պայմանագրի արժեքը կազմում է 6,900,000 դրամ, առանց ԱԱՀ-ի:

11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Համագործակցություն չի նախատեսվում:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ